

## **Իրականացվում են հեղեղավտանգ իրավիճակի կարգավորման և ռոռզման շրջանի նախապատրաստման աշխատանքներ**

Ապրիլի 8-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրտնտեսությունի նախագահ Արամ Հարությունյանը շահագրգիռ կառույցների ղեկավարների մասնակցությամբ քննարկեցին մարզում գարնանային վարարումներից սպասվող հեղեղավտանգ իրավիճակի հաղթահարման եւ ռոռզման շրջանին նախապատրաստվելու հետ կապված խնդիրներ: Արամ Հարությունյանի ներկայացմամբ՝ հակահեղեղային միջոցառումների իրականացման համար այս տարի պետական բյուջեից մարզին հատկացվել է մոտ 80 միլիոն դրամ, որն ուղղվել է բնակավայրերով հոսող գետերի առավել վտանգավոր տեղերի մաքրման ու ավերի ամրացման աշխատանքների իրականացմանը: „Առավել վտանգավոր ու խոցելի են դիտվել Գավառագետը Գավառ քաղաքում եւ Մարտունի գետը Գեղհովիտ գյուղում: Մաքրման աշխատանքներն արդեն մեկնարկային փուլում են եւ կավարտվեն առաջիկա 1 ամսվա ընթացքում՝ մինչեւ գարնանային վարարումների սկիզբը: Ռոռզման շրջանը կմեկնարկի 2-2,5 ամսից, ինչին նախապատրաստվելու համար մարզի 3 ջրօգտագործող ընկերություններին տրամադրվել է մոտ 90 միլիոն դրամ, որի շրջանակներում կնորոգվեն պոմպակայանները, ջրատարների վնասված հատվածները:Կարծում եմ, որ տրամադրված միջոցները բավարար են ռոռզման շրջանին պատրաստ լինելու համար,,-նշեց Արամ Հարությունյանը: Հրատապ է նաև Գավառագետի Արծվաքար թաղամասով անցնող որոշ հատվածի ամրացման խնդիրը, որի ուսումնասիրման և հետագայում դրա մաքրման ու ավապաշտպան գոտիների ամրացման աշխատանքների պլանավորման համար Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, ջրտնտեսությունի նախագահ Արամ Հարությունյանը եւ Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանը այցելեցին Արծվաքար թաղամաս: „Արծվաքար թաղամասում առկա է մոտ 2 կլիոմետր երկարությամբ Գավառագետի հունը մաքրելու եւ որոշ հատվածներում ավերի ամրացման աշխատանքներ իրականացնելու խնդիր: Խնդիրն արմատապես լուծելու համար առաջիկայում կիրականացվեն նախագծանախահաշվային աշխատանքներ, ապա փորձաքննության արդյունքը կներկայացվի ՀՀ կառավարություն, պահանջվող աշխատանքների համար ֆինանսական միջոցներ հատկացնելու նպատակով: Միջոցներ կգտնենք նաեւ Արծվաքար թաղամասի ռոռզման պոմպակայանի եւ ջրատարի վերագործարկման համար, ինչի արդյունքում այստեղ այս տարի բնակիչները հնարավորություն կունենան ռոռզելի դարձնել մինչեւ 40 հեկտար հողամաս,,-նշեց

Արամ

Հարությունյանը:

„Գարնանային վարարումներին ու ռոռզման շրջանի նախապատրաստմանն ընդառաջ՝ ՀՀ կառավարության միջոցներով իրականացվում են անչափ կարեւոր ու հրատապ աշխատանքներ: Մեր կողմից մանրակրկիտ ուսումնասիրվում են տեղերից բարձրացված հիմնահարցերը: Այսօր հրավիրված քննարկման արդյունքում ջրտնտեսությունի նախագահի հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն, պայմաններ ստեղծել հեղեղավտանգ իրավիճակի հաղթահարման ու ռոռզման շրջանի սկզբին լիովին պատրաստ լինելու համար,,-նշեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ

Գրիգորյանը:

Ապրիլի 5-ից ՀՀ պետական բյուջեից հատկացված 30 մլն դրամի շրջանակներում արդեն ընթանում են Գավառագետի Հացառատ թաղամասով անցնող հատվածի մաքրման աշխատանքները: Այն իրականացվում է „Ճամբարակի ՃՇՇՁ,, ՓԲԸ շինարարների կողմից: Հացառատի կամրջից մինչեւ քաղաքի հրապարակի կամուրջ ձգվող երկու հատվածներում պետք է գետի հունը մաքրվի 1,8 կլիոմետր երկարությամբ: Աշխատանքները կավարտվեն մեկ ամսվա ընթացքում: